6. ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ

6.1. Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 63-2.3-30)

Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է առողջապահության բնագավառում պետական առողջապահական ծրագրերի իրագործման գործընթացին: Մասնակցում է մարզային ենթակայության պետական առողջապահական հաստատությունների աշխատանքների կազմակերպմանը: Աջակցում է բնակչությանն օրենսդրությամբ սահմանված կարգով անվճար բուժօգնության իրականացմանը: Մասնակցում է առողջապահության բնագավառում Մարզի տարածքում հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը: Մասնակցում է սանիտարահիգիենիկ միջոցառումների կազմակերպմանը վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով: Մասնակցում է Մարզի բնակչության առողջական վիճակի ուսումնասիրության կազմակերպման, առողջապահության զարգացման հիմնական ուղիների մշակման աշխատանքներին և միջոցներ է ձեռնարկում հիվանդությունների, հաշմանդամության ու մահացության նվազեցման ուղղությամբ, ինչպես նաև ապահովում է մարդկանց կյանքի տևողության ավելացմանն ուղղված հետագա ծրագրերի իրականացումը:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

* բարձրագույն կրթություն՝ առողջապահություն մասնագիտությունների գծով,
* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «ա» ենթակետում նշված համապատասխան աշխատանքային ստաժ (տե՛ս սույն հայտարարության 8.1 ենթակետին հաջորդող պարբերությունը),
* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Մրցույթը կկայանա 10.04.2014թ.՝ ժամը 14ᵒᵒ-ին, Խորհրդի շենքում (ք. Երևան, Տերյան 89):